ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2021

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից 2020 թվականին կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ

2020 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատանքային գործունեության հիմքում դրված էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

2020 թվականին Կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 650-Լ որոշման 1 հավելվածի 137-149-րդ կետերի պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային բարեփոխումների, ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ, իրականացվել են հանրային քննարկումներ և մամուլի ասուլիսներ:

***Ջրային տնտեսության ոլորտում ջրային կոմիտեի համակարգմամբ 2020 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.***

1. Համաձայն 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական Կոմիտեի, <<Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ>> կոմանդիտային բաժնետիրական ընկերության և <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրված վարձակալության պայմանագրի, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից, 2020 թվականին <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ապահովվել է 6.1 մլն դրամի չափով ՀՀ պետական բյուջեի մուտքեր:

Համաձայն Վարձակալության պայմանագրի, Վարձակալի՝ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է պայմանագրային 3-րդ տարվա (2019թ.) պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի (ՊԿԱԾ) իրականացման հաշվետվությունը: ՊԿԱԾ-ի շրջանակներում վերակառուցվել և վերանորոգվել են ջրագծեր, կոյուղագծեր, օրվա կարգավորիչ ջրամբարներ և կապտաժներ, տեղադրվել են առևտրային հաշվառքի սարքեր՝ ընդհանուր մոտ 1,2 մլրդ դրամ գումարի շրջանակներում:

Համաձայն 2018 թվականի դեկտեմբերի 12-ի <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի հետ կնքված թիվ 8 համաձայնագրի՝ 2019 թվականի ՊԿԱԾ-ով նախատեսված 12 անուն աշխատանքների իրականացումը 1,028 մլրդ դրամ արժեքով (առանց ԱԱՀ) փոխանցվել է Կոմիտեին: Ձմեռային դադարից հետո աշխատանքներն վերսկսվել են և ավարտվել 2020 թվականին:

Կոմիտեն ՀՀ ՀԾԿՀ-ի և ՀԿ-ների մասնակցությամբ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը իրականացրել է (միայն Երևան քաղաքում՝ հանրապետությունում ստեղծված ռազմական դրությամբ պայմանավորված) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների ճշգրտմանն ուղղված մոնիտորինգ: Արձանագրված մոտ 980 հազ. խոր.մ ծավալային արժեքով ճշգրտման մեծությունը հանգեցրել է գումարային մոտ 1.753 դրամ/խոր.մ սակագնի նվազեցման: Համաձայն ՀՀ ՀԾԿՀ-ի 27.11.2020թ. N422-Ն որոշման՝ այն նախատեսվում է կիրառել 2022 թվականին, քանի որ այդ տարվա համար համաձայն վարձակալության պայմանագրի և վարձակալին տրված N0001 Լիցենզիայի պայմանների ակնկալվում է բավականին մեծ բազիսային սակագնի աճ: Հետևաբար, ՀՀ ՀԾԿՀ-ի, Վարձակալի և Ջրային կոմիտեի փոխադարձ համաձայնությամբ որոշվեց այն տեղափոխել 2022 թվական, որը թույլ կտա 1.753 դրամ/խոր.մ (ներառյալ ԱԱՀ-ն) արժեքով նվազեցնել տվյալ տարվա բազիսային սակագինը:

Համապատասխան աշխատանքներ են իրականացվել Վարձակալության պայմանագրով նախատեսված Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի 2019 թվականի գործունեության աուդիտի ապահովման համար:

Իրականացվել են ներդրումների պլանավորման և ակտիվների կառավարման գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներ: Ուսումնասիրվել և վերլուծվել են Վարձակալի կողմից Ջրային կոմիտե ներկայացված ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, համապատասխան մասնագիտական առաջարկություններ են ներկայացվել Անկախ տեխնիկական աուդիտորին և Վարձակալին: Ապահովվել է մասնակցություն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման ու վերակառուցման աշխատանքների մրցութային գործընթացին:

Իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ Երևանի <<Աերացիա>> կեղտաջրերի մաքրման կայանի ամբողջական շահագործման նպատակով կայանը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան հավատարմագրային կառավարման հանձնման մրցութային գործընթացի ապահովման ուղղությամբ, այդ թվում մշակվել է մրցութային փաթեթի տեխնիկական առաջադրանքի նախնական տարբերակը և փոխանցվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն՝ ՊՄԳ պահանջներին համապատասխանության ապահովման նպատակով լրամշակման և շտկման համար:

Սակագնի բարձրացում թույլ չտալու համար, <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի հետ 2019 թվականի հուլիսի 25-ին կնքվել է N13 համաձայնագիրը, որի արդյունքում 2021 թվականի համար սահմանվել է նույն սակագինը, որը գործում էր 2017 թվականին:

Ուսումնասիրվել են ՀՀ պետական ներդրումային ծրագրերով ջրամատակարարման համակարգերում նախատեսվող աշխատանքները և ներկայացվել են առաջարկություններ:

ՀՀ մարզերում և համայնքներում խմելու և ոռոգման ջրմատակարարման ոլորտներում իրականացվող սուբվենցիաների ծրագրային հայտերի վերաբերյալ Ջրային կոմիտեն ուսումնասիրել և իր դիրքորոշումն է ներկայացրել շահագրգիռ մարմիններին:

2. Ոռոգման նպատակով ջրառ իրականացնող <<Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 85.34 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը՝ նախորդ տարվա՝ 82.47 հազ. հա համեմատ 2.83 հազ. հա-ով ավելի:

Դեռևս 2016 թվականից մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: Վերը նշված սարքավորումների տեղադրման ու շահագործման համար նախնական գնահատականներով նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը և աշխատանքների իրականացումը կազմում է 1,5 մլրդ. դրամ: 2020 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցներով ձեռք է բերվել նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 652-Ն որոշմամբ 22.9 մլն դրամ է հատկացվել ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի վերականգնման և վերազինման, ինչպես նաև Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի վթարված հատվածի վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար, որոնք ամբողջությամբ կատարվել են:

ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 710-Ն որոշմամբ 66.1 մլն դրամ և 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1502-Ն որոշմամբ 41.9 մլն դրամ է հատկացվել հակահեղեղային միջոցառումների շրջանակներում գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար: Մրցույթի արդյունքում ձեռք է բերվել Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի բարձրացման նախագծանախահաշվային փաստաթղթերը 15.62 մլն դրամ արժեքով: Չօգտագործված գումարը հետ է վերադարձվել ՀՀ պետ բյուջե:

ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1502-Ն որոշմամբ 3.02 մլն դրամ է հատկացվել <<Երևան>> ՋՕԸ-ի սպասարկման տարածքում գտնվող թվով 94 ինքնաշատրվանող հորերը փականներով և ջրաչափերով կահավորման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 743-Ն որոշմամբ 34.9 մլն դրամ է հատկացվել ՀՀ Շիրակի մարզի Արփի լճի վերականգնման և վերազինման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար, որն ամբողջությամբ կատարվել է:

2019 թվականին սկսվել է ՀՀ Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարի ոռոգման ջրթողից ինքնահոս ջրատարի կառուցման գործընթացը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1614-Ն որոշմամբ հատկացվել է 43.40 մլն դրամ: Կազմակերպված մրցութային գործընթացի արդյունքում կնքվել է 32.99 մլն դրամի նախագծային աշխատանքների պայմանագիր, որից 2019 թվականին իրականացվել է 8.25 մլն դրամի աշխատանքներ: ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 16-ի N566-Ն որոշմամբ 24.7 մլն դրամ է հատկացվել նախագծային աշխատանքների ավարտի համար, որոնք ամբողջությամբ կատարվել են: Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2021 թվականին, որի համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 900 մլն դրամ գումար:

ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 20-ի N 192-Ն որոշմամբ 19.2 մլն դրամ է հատկացվել Արաքս գետի սահմանային Հ-39 նշանի հատվածում ափապաշտպան կառույցների վերականգնման աշխատանքների համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

3. ***Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս,*** որ 2020 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2020 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 26.4 մլրդ դրամ՝ 2019 թվականի 26.53 մլրդ դրամի փոխարեն կամ պակաս է գանձվել 0.13 մլրդ դրամ:

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2020 թվականին կազմել է 96.44%, որը նախորդ տարվա դրությամբ ավել է 2.31 %-ով, իսկ ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2020 թվականին կազմել է 59.06 %, որը նախորդ տարվա դրությամբ պակաս է 8.16 %-ով:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 22.76 մլրդ դրամ՝ 2019 թվականի 22.46 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 0.3 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.64 մլրդ. դրամ՝ 2019 թվականի 4.04 մլրդ. դրամի դիմաց կամ պակաս է գանձվել շուրջ 0.4 մլրդ. դրամ:

2020 թվականին համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի խնայողություն: 2020 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 195.84 մլն կՎտ ժ կամ 7.61 մլրդ դրամ՝ 2019 թվականի 209.91 մլն կՎտ/ժամի դիմաց՝ 7.8 մլրդ դրամ կամ պակաս է ծախսվել 14.07 մլն կՎտ ժ: Ոռոգման ոլորտում էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 142.74 մլն կՎտ ժ՝ 5.55 մլրդ դրամ՝ 2019 թվականի դիմաց 151.41 մլն կՎտ ժ՝ 5.87 մլրդ դրամ կամ պակաս է ծախսվել 8.67 մլն կՎտ ժ կամ 0.32 մլրդ. դրամ:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ հաշվետվության համաձայն ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին և ջրի որակի համապատասխանությունը սանիտարական նորմերի (մանրէաբանական վերլուծություն անցած ջրի որակի պահանջներին համապատասխանող նմուշների տոկոսը) պահանջների կազմել է 98.3 %:

4. 2020 թվականի ընթացքում <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը՝ Երևան քաղաքում եղել է 23.7 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում 19.6 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում 19.5 ժամ/օր:

5. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում ջրաչափությունը կազմում է 99.5%:

6. 2020 թվականի հունիսի 4-ին ընդունվել է <<Ոռոգման նպատակով 2020 թվականին Սևանա լճից ջրառի մասին>> ՀՀ կառավարության N 894-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2020 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170 մլն խոր.մ:

2020 թվականի հունիսի 5-ից մինչև հոկտեմբերի 27-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 162.4 մլն խոր.մ ջուր, (նախորդ տարվա ոռոգման շրջանում բաց է թողնվել 143.9 մլն խոր.մ ջուր), իսկ Արփա-Սևան թունելով 2020 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ Սևանա լիճ է տեղափոխվել շուրջ 209.0 մլն խոր.մ ջուր, 2019 թվականին՝ 160.0 մլն խոր.մ դիմաց կամ ավել է տեղափոխվել շուրջ 49 մլն խոր.մ ջուր: Սևանա լճի մակարդակը 2020 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ կազմել է 1900,52 մ, նախորդ տարվա նույն օրվա դրությամբ եղել է 1900.43 մ: Նախորդ տարվա համեմատ Սևանա լճի մակարդակը բարձրացվել է 9 սմ-ով կամ 130 մլն խոր. մ ջրով:

7. <<Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը 2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն հանձնվել է հավատարմագրային կառավարման <<Արփա-Սևան>> ԲԲԸ-ին:

<<Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում>> ծրագրի <<Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարում>> միջոցառմամբ 2020 թվականին հատկացվել է 205.8 մլն դրամ:

ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 871-Ն որոշմամբ 22.8 մլն դրամ է հատկացվել Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավման և վերազինման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար:

<<Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավման>> միջոցառմամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար հատկացվել է 8.4 մլն դրամ: Նախագիծն ընդունվել է, իրականացվել է շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ, որի արդյունքում ընտրվել է կապալառու և կնքվել է պայմանագիր: ՀՀ պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով լրացուցիչ համաձայնագիր չի կնքվել:

<<Արփա-Սևան ջրային համակարգի վերազինում>> միջոցառմամբ հատկացվել է 14.4 մլն դրամ թունելի փականային հանգույցների արդիականացման և վերազինման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար: Նախագծի ընդունման նպատակով ներկայումս մասնագիտական խմբի կողմից իրականացվում են ուսումնասիրություններ:

8. Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

**8.1 Վեդու ջրամբարը** կառուցվում է ՀՀ Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կոտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը:

2017 թվականի մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի շինարարական աշխատանքների մեկնարկը: Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2021 թվականին:

Ավարտվել են ջրի փոխադրող համակարգի շինարարական աշխատանքներն ու ճնշումային փորձարկումները: 2020 թվականի հունիսի 3-ից 5-ը իրականացվել են Համակարգի շահագործման փորձարկումները Վեդի և Խոսրով գետերում հասանելի ջրաքանակի պայմաններում:

Ոռոգման համակարգի շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են:

Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են: Անհրաժեշտ է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ ընտրել փորձնական տարածքները՝ փորձնական տարածքներում ոռոգման ներտնտեսային ցանցի շինարարական աշխատանքների գործընթացը մեկնարկելու նպատակով:

**8.2 Կապսի կիսակառույց ջրամբարը** գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում:

<<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1>> մշակվել են ինքնահոս համակարգի կառուցման մանրամասն նախագծման և տեխնիկական վերահսկողության մրցութային փաստաթղթերն ու առաջադրանքի պայմանները, որոնք ներկայացվելու են KFW բանկի հաստատմանը, սակայն գործընթացը դեռևս չի մեկնարկել, քանի որ ծրագիրն ակտիվ չէ և վարկային միջոցները դեռ հասանելի չեն:

**9. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում** և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման նպատակով իրականացվել են՝

1) 181 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ:

2) Արարատյան դաշտում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

10. 2020 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ: